Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20 ապրիլի 2023թ. ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲ ընկերության Գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս վերանայելով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-205/22» ծածկագրով հրապարակված մրցույթի գնման ընթացակարգը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2022թ. դեկտեմբերի 21-ին «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության կարիքների համար «Մեդիափոխարկիչ, համակարգչային տեխնիկաների օժանդակ նյութեր» ապրանքների ձեռքբերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-205/22» ծածկագրով գնման ընթացակարգ:

Նշված ընթացակարգի թիվ 1 չափաբաժնով (Քարտեր) մասնակցության հայտ է ներկայացրել «Էներջի Գրուպ» ՍՊ ընկերությունը, որը տեղեկացրել է, որ քարտերի նմուշները «ՀԱԷԿ» ՓԲ ընկերություն կարող է ներկայացնել 90 օրյա ժամկետում:

Ելնելով գնման առարկայի առանձնահատկություններից՝ գնման գործընթացը կասեցվել է մինչև «Էներջի Գրուպ» ՍՊ ընկերության կողմից քարտերի նմուշները «ՀԱԷԿ» ՓԲ ընկերություն ներկայացնելը:

Գնման ընթացակարգի կասեցման ժամանակահատվածում ԱՄՆ էներգետիկայի դեպարտամենտի ֆինանսական աջակցությամբ PNNL կազմակերպությունից ստացվել է գրություն առ այն, որ «ՀԱԷԿ» ՓԲ ընկերությանը պահանջված քանակով քարտեր՝ 5000 հատ, PNNL-ը կտրամադրի անհատույց:

14.04.2023թ. «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության անցագրային բաժնի պետից ստացվել է գրություն այն մասին, որ PNNL կազմակերպությունը «ՀԱԷԿ» ՓԲ ընկերությանը տրամադրելու է պահանջվող քարտերը, ուստի ներկայացված քարտերի գնման հատը անհրաժեշտ է չեղարկել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, այն է դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության կարիքների համար «Մեդիափոխարկիչ, համակարգչային տեխնիկաների օժանդակ նյութեր» ապրանքների ձեռքբերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-205/22» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած:
2. Սույն որոշման օրինակը տրամադրել «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ին:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**